

ՀԱՅԵՐԵՆ-ՈՒՐԱՐՏԵՐԵՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ
ՇՈՒՐՁ

Գ. Ջահուկյանի հայերենագիտական ժառանգության մեջ ուրույն տեղ են զբաղեցնում հայերենի համեմատական ուսումնասիրության և հնդեվրոպաբանությանն առնչվող բազմաթիվ հարցեր: Դրանց հիմքում հնդեվրոպական, խուռա-ուրարտական և կովկասյան լեզուների փոխհարաբերության քննությունն է, նաև՝ այդ լեզվաընտանիքների միջև գոյություն ունեցող հեռավոր ցեղակցության կապերի բացահայտումը: Ճշտելով հայերենի դիրքը հնագույն լեզուների շարքում՝ Գ. Ջահուկյանը ընդլայնում է հայերենի համեմատական քերականության շրջանակները: Նրա մի շարք աշխատություններ նվիրված են հայերենի և Բալկանյան թերակղզու ու Փոքր Ասիայի հնդեվրոպական հին լեզուների փոխհարաբերությանը: «Հայերենի և Բալկանյան թերակղզու ու Փոքր Ասիայի հնդեվրոպական հին լեզուների ոչ-ծագումնային զուգադիպությունների ուսումնասիրությունը,- գրում է գիտնականը,- խիստ կարևոր նյութ է տալիս ոչ միայն հայոց լեզվի, այլև հենց այդ լեզուների պատմության համար»¹: Հայերենի տարածքային դիրքի ճշգրտմանը զուգընթաց Գ. Ջահուկյանը հանգամանալից քննության է ենթարկում հայերենի և Առաջավոր Ասիայի հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուների առնչությունները՝ հստակ տարբերակելով դրանց միջև եղած ծագումնաբանական ընդհանրությունները փոխառություններից և այլ կարգի ազդեցություններից: Այս տեսանկյունից առանձնանում են հայերենի և ուրարտերենի, հայերենի և հայասերենի, հայերենի և այլ հնագույն լեզուների ծագումնաբանական ընդհանրություններին նվիրված հետազոտությունները՝ ընդգծելով այն խորը ազդեցությունը և ցեղակցական ու ժառանգորդական կապը, որ ունեցել են հայասերենը և ուրարտերենը հայերենի բառապաշարի վրա: Այդ լեզուներով վկայված բառերի հետազոտությունը և հայերենի հետ հնարավոր ընդհանրությունների բացահայտումը բացառիկ կարևոր նշանակություն ունի հայերենի կազմավորման ընթացքի, այդ լեզուները կրող ժողովուրդների մշակութային տարբեր շերտերի վերականգնման համար: Պետք է փաստել, որ ամենևին սահմանափակ չեն ուրարտագիտությանը մատուցած Գ. Ջահուկյանի ծառայությունները: Մեկ հողվածի շրջանակներում, բնականաբար, անհնարին է անդրադառնել ականավոր գիտնականի՝ ուրարտագիտությանը վերաբերող

¹ Գ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Երևան, 1970, էջ 164:

աշխատանքներում արժարժված բոլոր հարցերին: Այդ պատճառով սահմանափակվել ենք սուկ այն կարևորագույն նորույթներով, որոնք նպաստել են ուրարտագիտության առաջընթացին:

Հայ-ուրարտական լեզվական առնչություններն արտացոլված են հեղինակի՝ ինչպես գիտական հանդեսներում տպագրած հոդվածներում, այնպես էլ մենագրություններում: Գ. Ջահուկյանը ուրարտերենի աղբյուրներին անդրադառնում է հայերենի և իւթա-լուվական լեզուների բառային զուգադիպումները քննելիս², հայերենի և փոյուգերենի մերձավոր ցեղակցության հարցերին անդրադառնալիս³, իսկ «Ուրարտերենը և հնդեվրոպական լեզուները» հետազոտության մեջ, բացահայտելով ուրարտերենի բառապաշարում և քերականական կառուցվածքում առկա հնդեվրոպական տարրերը, եզրակացնում է, որ ուրարտերենը ակնհայտ ցեղակցական կապերի մեջ է եղել հնդեվրոպական լեզուների հետ⁴: Գ. Ջահուկյանը զարգացնում, ամբողջացնում և նոր որակ է հաղորդում ուրարտերենի նախորդ հետազոտողների (Կ. Լեման-Հաուպտ, Պ. Կրեչմեր, Ռ. Այսլեր, Ա. Մորտման, Ֆ. Շուլց, Հ. Սանդալյան, Ա. Սեյս, Հ. Հյուբշման, Գ. Մելիքիշվիլի, Բ. Նիկոլսկի, Բ. Պիոտրովսկի, Ի. Դյակոնով, Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան) տեսակետներին՝ փորձելով ուրարտերենում հնդեվրոպական լեզուներին բնորոշ առանձնահատկությունները բացատրել հնդեվրոպական և (ոչ միայն) լեզուների ազդեցությամբ: Հետագա ուսումնասիրություններում, սակայն, հեղինակը նոր որակի այնքան շատ հնդեվրոպական տարրեր է բացահայտում, որ դրանք այլևս չեն կարող դիտվել որպես փոխառություն կամ բացատրվել միայն ենթաշերտային ազդեցությամբ⁵:

Սեպագիր արձանագրությունների մասին առաջինը արձանագրել է Մ. Խորենացին: Պատմահոր վկայությունը վերաբերում է Վանա լճի արևելյան ափին Շամիրամի շինարարական գործերին.«Իսկ ընդդեմ արեգական կողմն անձաւին, ուր եւ ոչ գիծ մի երկաթով այժմ վերագրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նւթոյ պէս պէս տաճարս եւ սենեակս օթից եւ տունս զանձուց եւ վիհս երկարս, ոչ գիտէ ոք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց: Իսկ զամենայն երեսս քարին իբրեւ գրչաւ զմոմ հարթեալ՝ բազում գիրս ի նմա գրեաց, որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս տածէ: Եւ ոչ միայն այս, այլ եւ ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս

² Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայերենի և իւթա-լուվական լեզուների բառային կազմի ծագումային զուգադիպումները*, ՊԲՀ, 1967, N 4:

³ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայերենը և փոյուգերենը*, ՊԲՀ, 1968, N 3:

⁴ Տե՛ս Գ. Джаукян, *Урартский и индоевропейские языки*, Ереван, 1963, с. 146.

⁵ Տե՛ս Գ. Джаукян, там же, с. 141.

հաստատեալ, նովին գրով հաստատեր»⁶: Ուրարտացիները ասորական աղբյուրներում հիշատակվում են դեռևս Ք.ա. 13-րդ դարից, իսկ Ուրարտական արձանագրությունների լեզվի վերծանման ժամանակաշրջանը վերաբերում է 19-րդ դարին⁷:

Հայաստանին վերաբերող կարևոր տեղեկություններ է ընձեռում նաև Դարեհ Ա-ի թողած Բիհիսթունի հանրահայտ արձանագրությունը: Այն սեպագիր է՝ գրված երեք լեզուներով՝ հին պարսկերեն, էլամերեն, բաբելերեն, որտեղ Հայաստանը վկայված է երեք տարբեր անուններով. հին պարսկերեն՝ **Armina** (**Արմինա**), էլամերեն՝ **Harminuša** (**Հարմինույա**) և բաբելերեն՝ **Uraštu** (**Ուրաշտու**), որը ասուրերեն **Urartu** –ի բաբելական տարբերակն է: Ընդ որում՝ ուրարտացիներն իրենց կոչել են **biainli**, իսկ երկիրը՝ **Biaina**: Այդ անունը պահպանվել է **Վան** (սեռ. հոլ. *Վանայ*), իսկ **Urartu**-ն՝ **Այրարատ** անվանումներում⁸:

Գ. Ջահուկյանը գրում է, որ ուրարտացիների դարավոր համակեցությունը հայերի հետ, նրանց ձուլվելը որոշակի հիմքեր էին նախ՝ փոխառությունների, ապա՝ առշերտային, այնուհետև՝ ենթաշերտային ազդեցության համար⁹: Ուրարտական ազդեցությունը դրսևորվում է ոչ միայն բառապաշարի և քերականական որոշ առանձնահատկություններում, ինչպես՝ եզակի թվում **ի** հոլովման առկայությունը, հոգնակի թվում հոլովման **ա**-ով հիմքերի գերակշռությունը, **ն**-ով հիմքերի առատությունը, **ք** հոգնակիակերտ ձևայթի կայունացումը, այլև՝ հայերենի հնչյունական համակարգում, ինչպես՝ վերջնաթեր շեշտի առկայությունը, որը հանգեցնում է վերջնավանկ ձայնավորների թուլացմանն ու անկմանը փակ և բաց վանկերում, հարավ-արևելյան բարբառներում **հ**-ի **խ** արտասանությունը և այլն¹⁰:

Հայերենի և ուրարտերենի լեզվական առնչություններում Գ. Ջահուկյանն առանձնացնում է ուրարտերենից փոխառյալ բառերի շերտ, որոնք վերաբերում են ռազմական արշավանքներին, ջրանցքների կառուցման աշխատանքներին, կրոնական ծեսերին, զոհաբերություններին: Դրանք

⁶ **Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց**, Տփղիս, 1913, էջ 54: Ընդ որում՝ Ուրարտուի պատմությանը, ուրարտական մշակույթին և լեզվին վերաբերող բոլոր հետազոտություններում մասնագետներն առաջին հերթին նշում են Պատմահոր հենց այս վկայությունը:

⁷ Տե՛ս **Բ. Առաքելյան**, *Ուրարտուն և հայ ժողովրդի կազմավորումը*, Երևան, 1988, էջ 8-9:

⁸ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Երևան, 1987, էջ 427:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Տե՛ս **Գ. Джаукян**, *Урартский и индоевропейские языки*, Ереван, с.147. **Նույնի** *Հայոց լեզվի պատմություն*, էջ 427-428:

հարյուրից ավելի բառեր են, որոնք իմաստով և արտասանությամբ նույնանում են հայերենում գործածվող բառերին: Օրինակ՝

Arsibi (արծիվի) - արծիվ

Bause (բաուսե) – բան, խոսք, ասելիք, նաև՝ բան-բաս

Gie (գիե) – գինու մառան, վիհ, խոր փոս

Tase (տասե) – ընծա, տուրք

Edi (էդի) – տալ, հանձնել, ետ-ետու/տվեց, տվեցի

Kuri (կուրի) – ոտք, կուր՝ ձեռք

Tur (տու) – փշրել, ոչնչացնել, խփել

Gargarani (գարգարանի) – գրահ, պաշտպանական միջոց, անառիկ բերդ

Garini (գարինի) – բերդ, Գառնի, ամրոց

Kurunie (կուռունիե) – հզոր, ամրակուռ, կռել, կոփել

Tek-teku (թեկ-թեկու) – գետին տապալել, թեք-թեքել, խոնարհեցնել,

ենթարկել

Seri (շերի) – առանձնաբար, զգացմունքի հատուկ նվիրում, սեր

Suri (սուր) – զենք, սուր

Ushanu (ուշխանու) – շնորհել, պարգևել, նաև՝ նվեր տվող, իշխան

Hu (խու) – խլել, գրավել, հեռացնել, նաև՝ հու անել

Ini (ինի) – այդ, այս

Isi (իսի) – այն¹¹:

Ուրարտերենը կարևոր դեր է կատարել հայերենի հատուկ անունների կազմավորման գործընթացում: Ըստ Գ. Ջահուկյանի՝ Հայաստանի շատ տեղանունների հիմքում ուրարտական հասարակ անուններն են: Առավել քան խոսում է **Գառնի** տեղանվան նրա ստուգաբանությունը: Մասնագետները թեպետ Գառնի ամրոցի և տաճարի կառուցումը վերագրում են 2-3-րդ դարերին, սակայն, ըստ լեզվաբանի, **Գառնի** անվանումը գոյություն է ունեցել շատ ավելի վաղ, քան ենթադրվող ժամանաշրջանը, և «ամենայն հավանականությամբ անունը ծագում է ուրարտերեն **garini** «բերդ, ամրոց» բառից, որ մեկ անգամ հանդիպում է գործածված Արգիշտի I թագավորի Խորխորյան տարեգրության մեջ»¹²: Ինչ վերաբերում է **gar(i)ni** բառում *i* ձայնավորի անկմանը, ապա ըստ Հյուբշմանի՝ հայերենի համար դա օրինաչափ երևույթ է և ավարտվել է 2-3-րդ դարերում: Այդ ամենը հիմք է տալիս Գ. Ջահուկյանին եզրակացնելու, որ «Գառնիում բերդ գոյություն է ունեցել դեռևս ուրարտական

¹¹ Գ. Джаукян, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, 1967, с.18-53.

¹² Գ. Ջահուկյան, *Ստուգաբանություններ*, Պատմա-բանասիրական հանդես, 1963, N 4, էջ 96:

ժամանակներում»¹³: Պետք է նշել, որ **garini** - **garni** անվանումներից բացի հետազոտողները նշում են նաև **giarniani** տարբերակը, իսկ բառի **ia** բաղադրիչը համարում են տեղի խոսվածքի հատկանիշ¹⁴: Գ. Ջահուկյանը ուրարտական ծագում է վերագրում նաև **Կարբի** տեղանվանը՝ բխեցնելով **qarbi(e)**՝ «Ժայռ» հասարակ անունից¹⁵:

Ուրարտերենի հետքեր կան նաև հայերենում *-եւան-*ով վերջացող տեղանուններում, որտեղ պահպանվել է ուրարտերեն **ebani** «երկիր» բառը՝ բաղադրված իրանական ծագում ունեցող **աւան** (պրթ. *āvān*) և **վան** (իրան. *vān*) բառերով, ինչպես՝ Նախճ(ա)վան¹⁶:

Գ. Ջահուկյանը առանձնացնում է նաև հատուկ անուններում կիրառվող ածանցներ, որոնք ուրարտական ծագում ունեն, օրինակ՝ *-նի՝ Բջնի, Գառնի, Մուղնի, -եան(ք)՝ Աբեղեան(ք), Ախուրեան, Բասեան, -ունի՝ Բժնունի(ք), Խոռխոռունի(ք)*¹⁷: *-Ունի-*ով վերջացող շատ տոհմանուններ կամ նախարարական տների անվանումներ, որոնք *-ք* հոգնակերտով տեղանվանական արժեք ունեն, թեպետ սերում են ուրարտական շրջանից, այնուհանդերձ *-ունի* ձևույթը տարածված է նաև իրանական ծագման հիմքերի վրա՝ **Բագրատունի, Պահլավունի(ք), Տրդատունի(ք)** և այլն: Ջահուկյանն իրավացիորեն նշում է, որ *ունի-*ով մեր տեղանուններից շատերը ուշ շրջանի կազմություններ են, համաբանություններ կամ հին շրջանի անունների ձևափոխություններ՝ **Վահունի, Տրունի, Որդունի, Սահակունի, Մաղխագունի** և այլն: Ուրարտական ծագում ունի նաև բուսանուններ կազմող *-ենի* ածանցը՝ **խնձորենի, նոնենի, թզենի, թթենի** և այլն:

Անդրադառնալով հայերեն «հովիտ» բաղադրիչով կազմություններին՝ Գ. Ջահուկյանը ընդհանրություններ է նկատում ուրարտերեն **hubi-ի** հետ և նշում, որ հայերենում «հովիտ»-ով կազմված տեղանունները հիմնականում ուրարտական շրջանից են և մասամբ ուրարտական ծագում ունեն: Օրինակ՝ Վասպուրականում՝ **Աղի-ովիտ, Արճիշակ-ովիտ, Կոզ-ովիտ, Մոկքում՝ Արգաստ-ովիտ, Ծոփքում՝ Բալա-հովիտ**: Որպես ապացույց՝ նշում է դրանց աշխարհագրական դիրքը, օրինակ՝ **Աղիովիտ**-ը տեղադրմամբ համապատասխանում է ուրարտական **Alia**-ին (հմմտ. Աղի գետանունը), ուրարտական **Turasini hibi**-ին՝ հայկական **Տուրաթատափին**: Գ. Ջահուկյանը

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս **Н. Арутюнян, Биайниси**, Ереван, 1970, с. 427-428.

¹⁵ Տե՛ս **Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան**, Երևան, 1987, էջ 440:

¹⁶ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 443:

¹⁷ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 441-442:

եզրակացնում է, որ **Արգաստ-ովիտ** անվան առաջին բաղադրիչը ծագում է **Argišti** անունից, և **Argišti**-ն էլ ենթադրվում է Արձեշ բաղադրի անվան մեջ¹⁸:

Ի դեպ, հիշյալ ընդհանրությունները արգասիք են պատմական այն հանրահայտ իրողության, որ հնդեվրոպալեզու հայերը վաղուց ապրել են Ուրարտուի տարածքում և շրջակա երկրներում¹⁹: Ուստի ամեննին պատահական չէ ուրարտերեն բառերի առկայությունը հայերենում և հակառակը՝ հայերեն բառաշերտը ուրարտերենում:

Անշուշտ, միշտ չէ, որ տեղանունների ընդհանրությունը կամ հարատևությունը վկայում է լեզուների ազգակցական կապի մասին, բայց ուրարտա-հայկական առնչությունները այդ տեսանկյունից բավական խոսուն են:

Գ. Ջահուկյանի՝ իբրև խոհուն գիտնականի բնորոշ հատկանիշներից է այն, որ նա երբեք կանգ չի առնում արդեն արծարծված մի տեսակետի վրա և պարբերաբար անդրադառնում է իր կողմից նախկինում արդեն իսկ քննած իրողություններին: Այդ տեսանկյունից հատկանշական են ուրարտական, հատկապես Միերի դռան արձանագրություններում վկայված շուրջ հինգ տասնյակից ավելի դիցանունների դիտարկումները²⁰: Առանձնացնելով տարբեր հետազոտողների կողմից նշած դիցանունների կազմության որոշ առանձնահատկություններ՝ գիտնականը ուշադրություն է դարձնում՝ ա) **ā** ածանցի հաճախադեպ գործածությանը՝ **Adiā, Adarutā, Arsímela, Anapša** և այլն, բ) ուրարտերեն **-ini** ստացական ածանցով կազմություններին՝ **Alaptušini, Diduaini, Irmušini** և այլն, գ) **n** հոդի և հոգնակի սեռական-տրականի **-aue** վերջավորության կիրառությանը **Ainaue, Inuanaue** բառերում: Գ. Ջահուկյանը նկատում է, որ **Ai**-երը հայերի անվանումն է, իսկ որպես այերի Աստված ենթադրվում է Հայկը, ուստի **Ainaue** նշանակում է «այերի կամ հայերի Աստծուն», իսկ **Inuanaue**՝ «ինուաների Աստծուն»²¹:

Մեծ լեզվաբանը նշում է նաև երեք սկզբունք, որոնցով անհրաժեշտ է առաջնորդվել ուրարտերեն բառի հայկական ծագումն ապացուցելու համար.«1) ուրարտերեն բառի հնչյունական կերպարանքը պիտի ճշտորեն համապատասխանի պահպանված հայերեն բառի՝ ուրարտերենի ժամանակի համար վերականգնվող հնչյունական կերպարանքին, այսինքն՝ լիովին բխի հայերենի հնչյունական օրենքներից և օղակ լինի վերականգնվող

¹⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., 442-443:

¹⁹ Տե՛ս Թ. Գամքրելիձե, Բ. Իվանով, *Индоевропейский язык и индоевропейцы*, I—II, Тбилиси, 1984.

²⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայկական շերտը ուրարտական դիցարանում*, Պատմա-բանասիրական հանդես, 1986, N 1:

²¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 46:

հնդեվրոպական նախաձևի և հայերենի բառաձևի միջև. 2) հայերեն բառի համար վերականգնվող իմաստը պետք է համապատասխանի ուրարտերեն բառի կոնտեքստային իմաստին (իմաստներին) կամ նախնական լինի ուրարտական համապատասխան բառի իմաստի նկատմամբ (ուրարտական բառի իմաստը պետք է ածանցելի լինի նրանից և ոչ հակառակը). 3) այն դեպքում, երբ ուրարտերենի պահպանած հայերեն բառը հայերենի հայտնի վիճակում չի պահպանվել, այն պետք է հայերենի հնչյունական օրենքներով բխի հնդեվրոպական համապատասխան նախաձևից և հավաստիորեն վերականգնվի սրանով»²²: Նման մեթոդների կիրառությամբ ստուգաբանելով դիցանունները՝ Գ. Ջահուկյանը հավաստիորեն նշում է ոչ միայն ուրարտերենից հայերենի, այլև հայերենից ուրարտերենի կատարած փոխառությունները: Դա վկայում է այն փաստի մասին, որ ուրարտական արձանագրություններում կան հայկական ցեղերի կողմից պաշտվող և մասամբ նաև ընդհանուր բնույթ կրող աստվածներ, իսկ դիցանուններում հնարավոր է բացահայտել հայերեն բառերով և արմատներով մեկնվող որոշակի բառաշերտ²³:

Հայերենագիտության համար կարևոր նշանակություն ունի տեղանունների ուրարտերեն տառադարձության և դրանց հայերեն համարժեքների համեմատությունը, որը որոշակի օրինաչափություններ է բացահայտում հայերեն-ուրարտերեն լեզվական առնչությունների քննության հարցում: Խոսքը վերաբերում է հատկապես հատուկ և հասարակ անունների ուրատա-հայկական հնչյունական համապատասխանություններին²⁴: Իրեն բնորոշ գիտական բարեխղճությամբ և բժախնդրությամբ Գ. Ջահուկյանը նշում է ամենահավաստի զուգադիպությունները և փաստում, որ այդ աստիճանի նույնությունը չէր կարող ազդեցության հետևանք լինել: «Կան հայ-ուրարտական բառային մի շարք զուգադիպումներ,- նշում է գիտնականը,- որոնց դեպքում դժվար է որոշակի ընտրություն կատարել հայերեն (երբեմն էլ ուրարտերեն) բառերի բնիկ, թե փոխառյալ լինելու հնարավոր ենթադրությունների միջև...»²⁵: Այդուհանդերձ, ցուցաբերելով մեծ զգուշավորություն և խուսափելով միակողմանի բացատրություններից՝ լեզվաբանը եզրակացնում է, որ հայերենի բառապաշարում ուրարտերենի և ուրարտերենում հայերեն բառերի առկայությունը վկայում է այն վարկածի օգտին, որ Ուրարտու պետության մեջ երկար ժամանակ կողք կողքի ապրել

²² Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 47:

²³ Նույն տեղում:

²⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*, էջ 430-431:

²⁵ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 432:

են հայկական ցեղեր, որոնք, հավանաբար, աչքի ընկնող դեր են կատարել ուրարտական պետության կյանքում²⁶:

Ուրարտուի լեզվի և բառապաշարի հետազոտության ոլորտում մեծ լեզվաբանի դիտարկումները չեն սահմանափակվում նշած փաստերով: Նրա աշխատանքներում կան նաև նոր այլ մեկնություններ ու ստուգաբանություններ: Խոսքը վերաբերում է ուրարտական արձանագրությունների և դրանց առանձին հատվածների սկզբում տրված կադապարային բանաձևերի քննությանը: Երկար տարիներ նվիրելով այդ արձանագրությունների լեզվի ուսումնասիրությանը՝ մեծ հայագետը նշում է ուրարտերեն և հայերեն բառերի ծագումնային ակնհայտ ընդհանրություններ: Նկատում է, որ ուրարտերեն բառերի գործածությունը համընկնում է հայերեն բառերի իմաստային տարբեր դրսևորումներին: Մեծ լեզվաբանի ուշագրավ եզրակացությունն այն է, որ ուրարտական արձանագրությունների կադապարային բանաձևերի բառապաշարն ու քերականական կառուցվածքը հնարավոր է մեկնել հայերեն՝ դրանք համարելով հայոց լեզվի առաջին գրավոր տեքստերը: Այդ բանաձևերը հնարավորություն են տալիս կատարելու հայերենի նախագրաբարյան շրջանի բառային վերականգնումներ, պարզելու հետագա փոխառությունների բուն հայկական համարժեքները հնդեվրոպական նախաձևերի և ուրարտական կոչված արձանագրությունների ձևերի համեմատության հիման վրա²⁷:

Ո՛ր տեսանկյունից էլ փորձենք անդրադառնել հայ-ուրարտական լեզվական առնչություններին վերաբերող Գ. Ջահուկյանի եզրահանգումներին, միևնույն է, դրանք ընդմիջտ գոյատևելու են ուրարտագիտության մեջ: Տասնյակ տարիների ընթացքում անխոնջ գիտնականի գրչով հղկվել ու ամբողջացել են հայերեն բառերի ու բառաձևերի սեպագրային արտահայտությունները: Չի բացառվում նաև, որ ուրարտական արձանագրություններում այսօր էլ լինեն բառեր ու բառաձևեր, որոնք ժամանակի ընթացքում մասնագետների կողմից տարբեր մեկնաբանությունների տեղիք տան:

Գ. Ջահուկյանի ուսումնասիրությունները լուրջ ներդրում են հայերեն-ուրարտերեն լեզվական առնչությունների ուսումնասիրության ոլորտում: Կարծում ենք՝ դրանց կարելի է անդրադառնալ նաև առանձին ուսումնասիրությամբ:

²⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 444:

²⁷ Գ. Ջահուկյան, *Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին*, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 2000, էջ 124, 127-128:

Այսպիսով, ակնհայտ է, որ հայերեն-ուրարտերեն լեզվական առնչություններն ավելին են, քան փոխազդեցությունը: Ժամանակագրական, տարածքային, տեղանվանական, մշակութային և լեզվական անառարկելի փաստերը վկայում են հոգուտ Ուրարտուի հայկականության:

Гаяне Мхитарян - К вопросу армяно-урартских языковых отношений.- В научных трудах Г. Джахукяна выделяются исследования, посвященные генеалогическим общностям армянского и урартского, армянского и хайасского, так же армянского и других древних языков, которые имеют большое значение для процесса формирования армянского языка, для восстановления различных культурных слоев народов, говорящих на этих языках.

Посвятив много лет изучению языка урартских надписей, великий ученый отмечает, что употребление урартских слов совпадает с различными семантическими проявлениями армянских слов. Г. Джахукян приходит к выводу, что лексика и строй клинописных формул имеют армянский характер, и их можно считать первыми письменными текстами армянского языка. Очевидно, что армяно-урартские языковые отношения - это больше, чем взаимодействие. Хронологические, территориальные, местные, топонимические, культурные и языковые факты бесспорно свидетельствуют в пользу армянственности Урарту.

Gayane Mkhitaryan - On the Issue of Armenian-Urartian Language Relations.- G. Jahukyan's scientific works highlight the research devoted to the genealogical similarities of Armenian and Urartian, Armenian and Hayasian, as well as Armenian and other ancient languages which are of great importance for the formation of the Armenian language, for restoration of various cultural layers of people speaking these languages.

Having devoted many years to studying the language of Urartian inscriptions the great scholar notes that the use of Urartian words coincides with various semantic manifestations of Armenian words. G. Jahukyan comes to the conclusion that the vocabulary and system of cuneiform formulas have an Armenian character, and they can be considered to be the first written texts of the Armenian language. It is obvious that the Armenian-Urartian linguistic relations are more than interaction. There is no doubt that chronological, territorial, local, toponymic, cultural and linguistic facts testify in favor of the Armenianness of Urartu.